ԱՐԹՈՒՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵԳԻՊՏԱՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ XX ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ XXI ԴԱՐԱՍԿԶԲԻՆ

1980-ական թվականներից մինչև այսօր էլ եգիպտահայ համայնքը շարունակում է ապրել այն նույն ինքնակառավարման մեխանիզմով, ինչն այնտեղ գործում էր 1960-1970-ական թվականներին [1]:

Ըստ կազմական կանոնագրի՝ Եգիպտոսի Հայ առաքելական համայնքն իր մեջ ներառում է Եգիպտոսում բնակություն հաստատած բոլոր առաքելական հայերին: Համայնքը բաժանված է երկու կառավարման գոտիների (բառացի նշանակում է ձև, կազմ – (հեյե) (هيئة)՝ Կահիրեի և Ալեքսանդրիայի: Կահիրեի գոտու իրավասության տակ են գտնվում Վերին Եգիպտոսը, Հելիոպոլիսը, Մենուֆիեն, Շարգիեն և Սուեզը: Եգիպտոսի մյուս մասերը մտնում են Ալեքսանդրիայի շրջանակային իրավասության ներքո: Յուրաքանչյուր գոտի ունի իր թեմական ժողովը, քաղաքական ժողովը, կրոնական հանձնաժողովը, նվիրատվության հանձնաժողովը և համայնքի անդամների միջև ծագած անձնական հարցերի լուծման հանձնաժողովը:

Համայնքի գլուխն է առաջնորդը, որը բացի համայնքի կրոնապետը լինելուց՝ Կահիրեի և Ալեքսանդրիայի թեմական, թեմական համագումար և քաղաքական ժողովների նիստեր հրավիրողն է: Նա է նշանակում վերը նշված քաղաքների առաջնորդական փոխանորդներին՝ ընտրությունը համաձայնեցնելով քաղաքական ժողովների հետ: Առաջնորդական աթոռի թափուր մնալու դեպքում, հաջորդող երեք ամիսների ընթացքում Կահիրեի և Ալեքսանդրիայի երկու քաղաքական ժողովներն ու երկու կրոնական հանձնաժողովները առաջնորդական տեղապահ ընտրելու նպատակով հարցում են անում թեմական իշխանությանը՝ թեկնածությունը վավերացնելու համար՝ մինչև նոր առաջնորդի ընտրությունը (համաձայն Սահմանադրության/Դուսքուրի 158-րդ հոդվածի):

Իր օրենսդիր գործառույթներն այս շրջանում շարունակել է թեմական ժողովը, որի աշխարհիկ անդամներից նշանակվում է ատենապետ (նախագահի տեղակալ), փոխատենապետ և ատենադպիր (քարտուղար): Թեմական ժողովների դիվանների ընտրությունը տեղի է ունենում ամեն տարի՝ դեկտեմբեր ամսին: Դիվանի անդամները կարող են վերընտրվել: Ժողովը գումարվում է առնվազն տարին մեկ անգամ՝ նոյեմբերից մինչև մայիս: Անդամներից մեկ երրորդի, առաջնորդի կամ քաղաքական ժողովի պահանջով այն կարող է

արտակարգ նիստեր գումարել: Թեմական ժողովն է ընտրում քաղաքական ժողովին և հսկում նրա գործունեությունը, վավերացնում տարեկան տեղեկագիրը և վարչության հաշիվը, հաստատում հաջորդ տարվա բյուջեն, քվեարկում վարկերի տրամադրումը, նշանակում նվիրատվության հանձնախումբը և անձնական իրավիճակի հանձնախմբի (կարգավորում է ընտանեկան խնդիրները) անդամներին: Թեմական ժողովների ընտրության արդյունքը հաղորդվում է ներքին գործերի նախարարությանը:

Համագումար ժողովը, որ տարին մեկ անգամ (նոյեմբերից մայիս ընկած ժամանակահատվածում) գումարվում է Կահիրեում կամ Ալեքսանդրիայում՝ առաջնորդի նախագահությամբ, վերջինիս բացակայության պարագայում, նախագահում է այն քաղաքի փոխանորդը, ուր տեղի է ունենում գումարումը: Նիստը հրավիրում է առաջնորդը, իսկ նրա աթոռի թափուր լինելու դեպքում՝ տեղապահը: Առաջնորդի և տեղապահի բացակայության դեպքում նիստը հրավիրում է վերոհիշյալ փոխանորդներից մեկը, պայմանով, որ այն իրականանա Եգիպտոսում գտնվող անդամների բացարձակ մեծամասնության պահանջով: Համագումար ժողովի նիստ կարելի է գումարել նաև քաղաքական ժողովներից մեկի՝ թեմական ժողովին, որին այն ենթական է, ցանկություն հայտնելու դեպքում: Թեմական համագումար ժողովի իրավասություններն են ընտրել եկեղեցական ժողովների պատգամավորներ, փոփոխության ենթարկել գործող կազմական կանոնագիրը, սահմանել համայնքի յուրաքանչյուր անդամից գանձվող տարեկան տուրքի չափը, արտոնել կալվածքների գնումը, վաճառումը և փոխանցման մյուս եղանակները: Ժողովի խորհրդակցություններն օրինական են, եթե ներկա են երկու թեմական ժողովների անդամների մեծամասնությունը, հակառակ դեպքում այն գումարվում է հաջորդ ամսին:

Եգիպտահայ համայնքի գործադիր իշխանությունը շարունակեց մնալ քաղաքական ժողովը, որի 7 անդամները գաղտնի կերպով ընտրվում են թեմական ժողովի կողմից երկու տարվա շրջանի համար: Նոր ժողովը չի կարող ընդգրկել նույն անդամներից ավելին քան երեքին: Քաղաքական ժողովն իր անդամների միջից ընտրում է ատենապետ, որը վարում է ժողովի աշխատանքները, փոխատենապետ, ատենադպիր և գանձապետ: Նիստերը վավեր են, եթե քվեարկվում են առնվազն 4 անդամների ներկայությամբ: Ոչ ծայրահեղ դեպքերում ժողովը պետք է գումարվի գոնե ամիսը մեկ անգամ: Քաղաքական ժողովն իրավասու է վարել համայնքի ինչքերն ու նյութական և բարոյական շահերը, ինպես նաև կրթական և մշակութային հաստատությունները: Այն պահում է համայնքի անդամների անունները արձանագրելու սահմանված մատյանները, կնունքի, ամուսնության, ամուսնության, ամուսնալուծման, մահվան և նվիրատվության գրքույկները: Ժողովն է պատրաստում տարեկան բյուջեն և այն

ներկայացնում թեմական ժողովի վավերացմանը, ցուցակագրում է սեփականության փաստաթղթերը, համայնքային շարժական և անշարժ գույքերը և վերաքննում դրանց մատյաններն ամեն տարի: Քաղաքական ժողովի իրավասության ներքո է նաև ընտրել հոգաբարձություններ յուրաքանչյուր վարժարանի գործերը վարելու, աղքատախնամ գործերի, եկեղեցական և գերեզմանատների գործերը վարելու ու կալվածքների համար: Այն կարող է ստեղծել նաև այլ հանձնախմբեր հարկ եղած դեպքում:

Կահիրեի և Ալեքսանդրիայի թեմական ու քաղաքական ժողովների, համագումար ժողովի կայացրած որոշումները, ըստ կանոնագրի, վճռում է առաջնորդը կամ տեղապահը, իսկ նրանց բացակայության դեպքում փոխանորդները՝ յուրաքանչյուրը իրեն վերաբերող հարցի հետ կապված:

1981-2007 թթ. ընթացքում Եգիպտոսում հայերն ապրել են հասարակական ակտիվ կյանքով, գործել են մի շարք մշակութային ու հասարակական կազմակերպություններ, որոնց բազմաբեղուն աշխատանքի արդյունքում եգիպտահայ համայնքը պահել է իր էջմիածնական դիմագիծը:

1985 թ. խանդավառ պայմաններում տոնախմբվել է Ալեքսանդրիայի Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցու կառուցման և օծման 100-ամյակը:

Դեռևս 1984 թ. սեպտեմբերին 10-ին Նորին Սուրբ Օծություն Տ. Տ Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը թիվ 1297 սրբատառ իր կոնդակով գրել է այդ առթիվ. «Միջերկրականի ափին բարձրացած Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին մշտավառ ջահի նման ահա ուղիղ մեկ դարե ի վեր շարունակ Քրիստոսի Ավետարանի լույսն ու ջերմությունն առատորեն կբաշխե ձեզ բոլորիդ, ի մխիթարություն ձեր հոգիներուն և ի շինություն ձեր կրոնական և մշակութային կյանքին՝ պահպանումովը մեր նախնյաց քրիստոնեական սուրբ ավանդություններուն»:

«Հոբելյան մըն է այս, - խնդությամբ արձանագրում է վեհափառ Հայրապետը Ալեքսանդրիա առաքված սրբատառ կոնդակով, -... ոգեկան հաղթանակներեն մին եգիպտական հյուրընկալ ու մարդասեր արաբ ժողովրդի ծոցին մեջ: Հոբելյան մը, որ ճշմարիտ ավետիս մըն է նաև համայն մեր եկեղեցիին և և հատկապես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համար» [2]:

Վեհափառ Հայրապետը, ընդառաջելով եգիպտահայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Զավեն արքեպ. Չինչինյանի հրավերին, էջմիածնից հոգեվորականների խումբ է ուղարկել՝ մասնակցելու այդ հանդիսություններին:

Հոգևորականները եղել են Կահիրեի առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, ծանոթացել թեմական և քաղաքական ժողովների անդամների հետ: Նրանց պատվին 1985թ. դեկտեմբերի 26-ին հյուրասիրություն է կազմակերպել Հայկական ընթերցասրահի վարչությունը, որի անունից հանդես է եկել

Էդվարդ Հակոբյանը և հակիրճ ներկայացրել վարչությանն ավելի քան 80-ամյա մշակութային ու ընկերային բազմաբեղուն գործունեության պատկերը՝ շեշտելով, որ վարչությանը միշտ օժանդակել են Մայր հայրենիքը և Սուրբ Էջմիածինը:

Ընդունելությունների շարքն այսքանով չի սվարտվել: Նույն ամսվա 29-ին հյուրերի ներկայությամբ ուխտի աղոթք է տեղի ունեցել հրաշակերտ եկեղեցու հոբելյանականի առթիվ, որից հետո հոգևորականները եղել են Պողոսյան վարժարանի «Մելքոնյան» մանկապարտեզի սրահում տեղի ունեցած ամանորյա հանդեսին, հունվարի 2-ին՝ ելույթ են ունեցել «Հառաջդիմասեր»-ի մեծ սրահում՝ «Շիրակի թեմը և Յոթվիրաց առաջնորդանիստ եկեղեցին» թեմայով, իսկ հունվարի 3-ին՝ «Տիգրան երկաթ» հնագույն սրահում՝ «Հայկական հայրենասիրություն» թեմայով: Խմբի ողջերթի երեկոն կազմակերպվել է Գեղարվեստասիրացի սրահում:

Խմբի անդամ եպիսկ. Նարեկ Շաքարյանը, անդրադառնալով եգիպտահայ թեմական կյանքին, հիշատակել է նաև եգիպտոսի 3-րդ առաքելական եկեղեցուն՝ Ս. Մինասին: Այն վերանորոգվել է մի քանի անգամ և գտնվում է Կահիրեի հին գերեզմանատան մեջ: Այստեղ է, որ տարին մեկ անգամ կատարվում է սուրբ պատարագ և հոգեհանգստյան պաշտոն՝ եկեղեցու բարերարների, մեծ երախտավորների հոգիների համար [3]:

Եգիպտոսում իր լայնածավալ աշխատանքներն է շարունակում Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, որի Կահիրեի և Ալեքսանդրիայի մասնաճյուղերը բազմաթիվ ծառայություններ են մատուցում եգիպտահայերին՝ անկախ վերջիններիս քաղաքական ու կրոնական պատկանելության:

Հ.Բ.Ը.Մ Եգիպտոսի գերատեսչությունը գտնվում է Կահիրեի Եմադ ադ-դին փողոցում, մինչդեռ Կահիրեի մասնաճյուղը իր գործողությունները ղեկավարում է Հելիոպոլսի Մուբարաք փողոցի՝ իր գրասենյակից, ուր տեղափոխվել է 2003 թ.: Հ.Բ.Ը.Մ Ալեքսանդրիայի վարչությունները՝ Ալեքսանդրիայի Հ.Մ.Ը.Մ-Նուբար ակումբի հետ միասին տեղակայված են Օմար Լոթֆի փողոցում [4]:

Եգիպտոսում Հ.Բ.Ը.Մ ծառայությունները հիմնականում իրականացվել են՝ շնորհիվ հանգուցյալ Սթենիկ Չաքրի, որն իր ժառանգության զգալի մասը նվիրաբերել է Կահիրեի մասնաճյուղին այն եգիպտահայ համայնքին ծառայեցնելու համար: Չաքրի անունով ստեղծված հիմնադրամով ծավալվում են հասարակական, կրթական և մշակութային աշխատանքներ, աջակցություն է ցուցաբերվում մարզական և երիտասարդական կազմակերպություններին ու ակումբներին:

Այս տարիներին կրթական ծրագրի շրջանակներում Սիությունը մեծագումար կրթաթոշակներ է հատկացրել այդ երկրի տարբեր ուսումնական հաստատություններում սովորող հայ երիտասարդներին: Հատկապես կարևոր է նրա

օժանդակությունը մասնավոր համալսարանների ուսանողներին (2005թ. նրանց թիվը 40 էր), ուր ուսման վարձը շատ բարձր է: Պ. Թերզյանը նշում է. «...Կիրականացվի նաև կրթական համագործակցութիւն, մասամբ կը հոգանք Հայաստանի Համալսարանէն, Եգիպտոսի մեջ կատարելագործման շրջան մը անցնելու ժամանած ուսանողներուն ծախսերը, նաև.... արդէն երեք տարիէ ի վեր կանոնաւոր կերպով Բարեգործականը յատկացումներ կը կատարէ Եգիպտոսի համալսարաններու կարիքաւոր ուսանողներու ֆոնտին, այդպիսով մեր մասնակցութիւնը կը բերենք մեզ հիւրանկալող երկրին իրագործումներուն»[5].

Հ.Բ.Ը.Մ.-ն մարդասիրական բնույթի ծրագիր է իրականացնում նաև այդ նպատակով ստեղծված Ընկերային օժանդակության բաժնի միջոցով: Այդ ծրագրի շրջանակներում ամսական դրամական նպաստներ են հատկացվում համայնքի անապահով տարեցներին, որոնք անվճար ստանում են դեղորայք, բժշկական խնամք և այլն: Այն ստեղծել է բժշկական ապահովագրական համակարգ, որը 50 տոկոսով փակում է ծրագրի մասնակիցների բուժման ծախսերը: 2006թ. գրանցված են եղել 407 հոգի, որոնցից 343-ը՝ թոշակառուներ: Միության Եգիպտոսի շրջանակային հանձնաժողովի հրատարակչական գործունեությունն ունի ոչ միայն տեղական, այլև համահայկական կարևորություն: Այդ են վկայում արաբերենով հրատարակված «Հայերը Եգիպտոսի մեջ 19-րդ դարում» մենագրությունը, Եգիպտոսի արդի գեղանկարչության հիմնադիրներից Երվանդ Տեմիրճյանի և ականավոր երգիծանկարիչ Ալեքսանդր Սարուխանի գործերի ալբոմները, «Հայ բանաստեղծության ծաղկաքաղ» ժողովածուն և բազմաթիվ այլ գրքեր:

Եգիպտոսում հայապահպան նվիրական առաքելություն է կատարել և այսօր էլ շարունակում է իր գործը Հայ կարմիր խաչը: Հակառակ եգիպտահայ համայնքի նոսրացմանը՝ այն հետզհետե ընդարձակել է իր գործունեության ոլորտը և բացի կարիքավորներին օգնելուց՝ օժանդակել կրթությանը և հայեցի դաստիարակությանը: 1982 թ. հաստատությունը մեծ շուքով տոնել է իր հիմնադրման 50-ամյակը և կազմակերպել տարբեր միջոցառումներ [6]:

Իրենց մարզական գործունեությունը շարունակեցին Հ.Մ.Ը.Մ. Կահիրեի և Ալեքսանդրիայի ակումբները, որոնք հիմնականում անցկացնում էին բասկետբոլի և ֆուտբոլի մրցաշարեր: Մրցաշարերն անցկացվում էին ինչպես համայնքի ներսում, այնպես էլ եգիպտական թիմերի հետ [7]:

Եգիպտահայ մշակութային կյանքում ակտիվ է Հայ գեղարվեստասիրած միությունը, որի երիտասարդական հանձնախումբը կազմակերպել է մի շարք համերգներ, ցուցահանդեսներ և այլն: Թեմի առաջնորդի հովանավորությամբ հանձնախումբը կազմակերպել է ավանդական փառատոներ[8]: 1990թ. Միությունը մեծ շուքով նշել է իր 70 ամյակը [9]:

Իր ջանքերը հայապահպանմանը, հայ մշակութային կենտրոնների ստեղծմանը հայ մամուլի զարգացմանը և հայ երիտասարդների՝ հրապարակախոսական և եկեղեցական գործունեության համար պատրաստելուն է ողղել Հայ ազգային հիմնադրամը, որի միջոցներով հրատարակվում է հայագիտական գրականություն, լույս է ընծայվում «Արև» օրաթերթը [10]:

Եգիպտոսում ձևավորված համահայկական կազմակերպություն է դեռ 1928թ. Կահիրեում հիմնված Համազգային մշակութային միությունը, որը 1990թ. վերանվանվել է Համազգային հայ կրթական և մշակութային միության (ՀՀԿՄՄ): Այն վայելում է ՀՀՌ կուսակցության հովանավորությունը: Ըստ 1990 թ. ընդունված կանոնագրի՝ նպատակն է «ա. սատարել հայ մշակույթի, հայ դպրության, հայ լեզվին և ընդհանրապես հայ հոգեկան և իմացական արժեքներու ճանաչման, զարգացման, տարածման և ժողովրդականացման՝ Հայաստանի և արտերկրի մեջ, բ. օժանդակել հայապահպանման ճիգերուն, ազգային նշանակություն ունեցող ավանդույթներու շարունակման և մշակութային նոր ավանդներու ստեղծման, գ. մշակութային ձեռնարկներով՝ ցուցահանդես, հանդիսություն, հրատարակությունների, հայը, հայությունն ու Հայ դատը ծանոթացնել հայ թե օտար հասարակության»: Ինչպես սփյուռքի մի շարք համայնքներում, այնպես էլ եգիպտահայ համայնքում, ներկայումս հայապահպան գործունեություն է իրականացնում Համազգայինի Կահիրեի մասնաճյուղը:

Այս շրջանում ակտիվ մշակութային կյանքով են գործել Ալեքսանդրիայի «Տիգրան Երկաթ» (որը կազմակերպում է գրական երեկոներ, դասախոսություններ, թատերական ներկայացումներ, համերգներ, զբաղվում է հրատարակչական գործունեությամբ և աջակցում Պեղոսյան ազգային վարժարանին, օգնում Եվրոպայում սովորող հայ ուսանողներին), «Հուսաբեր» մշակութային ընկերակցությունները, Հ.Մ.Ը.Մ. մարմնամարզական մասնաճյուղերը և այլ հասարակական կազմակերպություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

[1] Ա. Ալպոյաճյան, Արաբական միացյալ հանրապետության Եգիպտոսի նահանգը և հայերը, Կահիրե, 1960, էջ 302-309:
[2] «Էջմիածին» , 1986, N° 2, էջ 31:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] AGBU EGYPT, The activities of AGBU Egypt, Official site of AGBU (Armenian General Benevolent Union) EGYPT.
[5] «Խօսնակ», յունիս, 2000, էջ 19:
[6] «Հուսաբեր», 1 փետրվար, 1982:
[7] «Ջահակիր», 13 հունվ., 1983, 13 դեկտ., 1990, «Արև», 29 հունվ., 1982:
[8] «Արև», 23 հունվ., 1982, «Ջահակիր», 5 հունվ., 1984:
[9] Նույն տեղում, 29 նոյեմբեր, 1990:
[10] Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 160: